ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 405
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Խնձորուտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Վայք համայնքի (Խնձորուտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝
ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Խնձորուտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Խնձորուտ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-026-0114-0003 կադաստրային ծածկագրով 0.8 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	10-026-0114-0003 կադաստրային ծածկագրով 0.8 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Վայք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Խնձորուտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Խնձորուտ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 7 » «հոկտեմբերի» 2024 թ.